ՋՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ջրի հաշիվները նախատեսված են օգտագործողին տրամադրել հաշվետու տարում ջրային ռեսուրսների հասանելիության, արդյունավետ կառավարման, սպառման և վերականգնվող ծավալների վերաբերյալ արդիական, ամբողջական, համադրելի և մատչելի տեղեկություն: Ջրի հաշվառումը ներառում է մի շարք տարբեր հաշիվներ, որոնք պարունակում են տեղեկություն ջրի ֆիզիկական և դրամական հոսքերի և ջրային ռեսուրսների առկայության մասին՝ արտացոլելու ջրի անբաժանելի դերը մարդու կյանքում, տնտեսական գործունեության և շրջակա միջավայրի ամբողջականության մեջ: Հաշիվներն արտահայտվում են տնտեսական ցուցանիշներով. օրինակ՝ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և դրանից ստացված ավելացված արժեքը, որոնց հիմնական օգտագործողները լինելու են ոլորտի ռազմավարություն մշակողները և որոշումներ կայացնողները:

Այն աջակցում է տնտեսության մեջ ջրի դերի և շրջակա միջավայրի ու ջրի հետ կապված տնտեսական գործունեության միջև փոխհարաբերությունների վերլուծություններին:

Ի՞նչ են ջրի հաշիվները

Ջրի հաշվառումը հաշվապահական մոտեցում է, որը հնարավորինս ամբողջությամբ գրանցում է ջրի պաշարներն ու հոսքերը տնտեսության ներսում և շրջակա միջավայրի միջև:

Տնտեսական և հիդրոլոգիական տեղեկության ինտեգրումը հնարավորություն է տալիս հետևողականորեն ներկայացնել ջրի դերն ու նշանակությունը տնտեսության համար և տնտեսության ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա: Ջրերի վերաբերյալ բնապահպանական-տնտեսական հաշիվների համակարգը հնարավորություն կտա կազմել միջազգայնորեն ընդունված առաջարկություն-ների և միջոցառումների ցանկ, որոնցով կուղղորդվի տնտեսական գործունեությունը:

Ջրի հաշիվների մասին ողջ տվյալները՝ www.armstatbank.am

Ջրի հաշիվները Հայաստանում

2015թ-ից սկսած Արմստատը հանձ է առել Հայաստանի ազգային հաշիվների համակարգում բնապահպանական սատելի-տային հաշիվներից «Ջրի հաշիվների» բաղադրիչի ներդրման աշխատանքները: Ջրի հաշիվների կազմման աշխատանքներում Արմստատը սերտորեն համագործակցում է Շրջակա միջավայրի, Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, Ջրային կոմիտեի, «Հիդրոօդերևութա-բանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի և այլ գերատեսչությունների հետ:

Ջրի հաշիվները վերհանում են Հայաստանում ջրի տվյալների բացերը և ջրային ռեսուրսների կառավարման թերացումները, որոնք մասամբ վերաբերում են նաև ջրօգտագործման վերաբերյալ տվյալների հասանելիությանն ըստ տնտեսական գործունեության տեսակների, տնտեսության ներսում ջրի շարժին, կեղտաջրերի մաքրմանն ու արտանետումներին, շրջակա միջավայր վերադարձող ջրի ծավալներին և որակին:

Սույն ինֆոգրաֆիկը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատուն բացառապես Արմստատն է և այն կարող է չարտացոլել Եվրոպական Միության տեսակետը:

Funded by the European Union

EU4Environment
Water and Data in Eastern Partner Countries

ARMSTAT
Statistical Committee
Republic of Armenia

Հայաստանում ջրի հաշիվների պատկերը, 2022թ.

Շրջակա միջավայր

Ներհոսք 894.8

Տեղումներ 13,256

3,973.9

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գոլորշիացում 10,177

Արտահոսք
տվյալների բացերով պայմանավորված հնարավոր չի եղել հաշվարկել

Հայաստանից դուրս վերին հոսքի ավազաններ և ջրատար հորիզոններ

Ստորերկրյա ջուր

Մակերևութային ջուր

Հայաստանից դուրս ստորին հոսքի ավազաններ և ջրատար հորիզոններ

1,419.2

3,072.7

1,652.5

Թվերը տրված են տարեկան միլիոն խորանարդ մետրով (մլն. մ^3/տ)

ՋՐԱՌ

1 մլն. մ^3-ը համարժեք է 400 օլիմպիական լողավազանի ծավալին

Տնտեսություն

1,154.5

1,728.1

189.1

923.2

52.9

242.0

Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն

Ջրի հավաքում, մշակում և բաշխում

1,729.6

Արդյունաբերություն և ծառայություններ*

2,077.7

**Վիճակագրության մեջ տնային տնտեսությունները չեն ներառվում տնտեսության ոլորտներում:

152.0

1.0

153.0

Տնային տնտեսություններ**

106.3

120.3

14.0

Կոյուղի

*Արդյունաբերողները կարող են ունենալ կեղտաջրերի մաքրման սեփական համակարգ կամ օգտվել կենտրոնացված կոյուղու համակարգից: Հիդրոէլեկտրա-կայանների կողմից օգտագործվող ջուրը ներառված չէ:

Շրջակա միջավայր

928.3
որից 682.9-ը՝ ձկնաբուծություն
Ջրի ներթափանցում հող, ստորերկրյա ջրեր, արտահոսք դեպի գետեր

600.0
Կորուստներ տարանցիկ տեղափոխման ժամանակ

120.3
44.4% չմաքրված և 55.6% մաքրված կեղտաջրեր

16.1
Չմաքրված կեղտաջրերի ուղղակի արտահոսք

58.7
79.2% մաքրված և 20.8% չմաքրված կեղտաջրերի ուղղակի արտահոսք

1,723.4

ՎԵՐԱԴԱՐՁ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Սույն ինֆոգրաֆիկը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատուն բացառապես Արմստատն է և այն կարող է չարտացոլել Եվրոպական Միության տեսակետը:

Funded by the European Union

ARMSTAT | Statistical Committee Republic of Armenia

Նշաններ և բառարան

Ջրային հոսք - ջրառ. մակերևութային ջրերից (գետեր, լճեր) կամ ստորգետնյա հորիզոններից ջրառ:

Ջրային հոսք - ջրամատակարարում (տնտեսության ներսում և ջրամատակարարում տնային տնտեսություններին). ջրամատակարարումը ջրի տրամադրումն է վերջնական օգտագործողներին, ներառյալ՝ ջրառը սեփական օգտագործման համար: Օրինակ՝ արտադրական գործարանը կարող է պահանջել օրական 40,000 լիտր քաղցրահամ ջուր իր սարքավորումները սառեցնելու, գործարկելու և մաքրելու համար: Եթե նույնիսկ կայանն այդ ջրի 95 տոկոսը վերադարձնի ջրավազան, միևնույն է գործարանին անհրաժեշտ է ողջ 40,000 լիտրն՝ աշխատելու համար:

Ջրային հոսք - վերադարձ շրջակա միջավայր (մաքրված կամ չմաքրված կեղտաջրերի ուղղակի արտահոսք, ջրակորուստներ ոռոգման ջրանցքներից և ջրամատակարարման ցանցերից, և այլն)

XX

Վերականգնվող ջրային ռեսուրսներ. վերականգնվող ջրային ռեսուրսները վերադառնում են հիդրոլոգիական շրջապտույտի միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք գերշահագործվում են: Դրանք ներառում են ստորերկրյա ջրատար հորիզոնները և մակերևութային ջրերը, ինչպիսիք են գետերն ու լճերը: Վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսները համալրվում են տեղումներով (հանած գոլորշիացումը), որոնք թափվում են գետեր և համալրում ջրատար հորիզոնը (ներքին հոսք), ինչպես նաև մակերևութային և ստորերկրյա ջրերով, որոնք հոսում են հարևան երկրներից (արտաքին ներհոսք՝ վերին հոսանքներից), հանած մակերևութային և ստորերկրյա ջրերի արտահոսքը դեպի հարևան երկրներ և դեպի ծով: Չվերականգնվող ջրային ռեսուրսները կամ ընդհանրապես չեն համալրվում բնության կողմից, կամ սա տևում է շատ երկար: Վերջինիս դեպքում ջուրը ներառվում է, այսպես կոչված, խորքային գրունտային ջրերի մեջ:
(Աղբյուր՝ Եվրոպական շրջակա միջավայրի գործակալություն և ENI SEIS II EAST ծրագիր)

XX

Ջրառ. մակերևույթից (գետեր, լճեր) կամ ստորերկրյա (ջրատար հորիզոններ և այլն) ջրի վերցման գործընթաց՝ ժամանակավոր կամ մշտապես: Կախված տվյալ երկրի բնապահպանական օրենսդրությունից, ջրառի համար կարող է իրականացվել հսկողություն՝ սահմանափակելու վերցվող ջրի քանակությունը: Չափից դուրս ջրառը կարող է հանգեցնել գետերի չորացման կամ ստորերկրյա ջրատար հորիզոնների անթույլատրելի սպառման:
(Աղբյուր՝ Եվրոպական շրջակա միջավայրի գործակալություն)

XX

Ջրօգտագործում. ջրօգտագործումը դա այն ջուրն է, որը տվյալ տարածքում որոշակի նպատակով, օրինակ՝ կենցաղային օգտագործման, ոռոգման կամ արդյունաբերական վերամշակման համար, փաստացի օգտագործվում է վերջնական սպառողների կողմից (օրինակ՝ տնային տնտեսություններ, ծառայություններ, գյուղատնտեսություն, արդյունաբերություն):
(Աղբյուրը՝ Եվրոստատ, վիճակագրական բացատրություն)
Ջրի կաթիլների թվերը ներկայացնում են ջրօգտագործման քանակն ըստ ոլորտների:

XX հանած XX

Ջրի սպառում. սա ջրօգտագործման այն մասն է, որը ջրառից հետո չի վերադարձվում շրջակա միջավայր: Սպառումը տեղի է ունենում, երբ ջուրը գոլորշիացման միջոցով տեղափոխվում է մթնոլորտ կամ մտնում է արտադրանքի կամ արտադրական պրոցեսի մեջ և այլևս հասանելի չէ կրկնակի օգտագործման համար:
(Աղբյուր՝ Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտ)

XX

Շրջակա միջավայր վերադարձվող ջուր. ջուրն օգտագործելուց հետո կարող է վերադարձվել շրջակա միջավայր կամ ոռոգման ջրանցքներից, կամ ջրաբաշխման համակարգերից և կամ ուղղակի արտահոսքերի արդյունքում: Այս ջրի մի մասը կարող է լինել տարբեր որակի՝ կախված դրա աղտոտվածության աստիճանից (գյուղատնտեսական, կենցաղային կամ արդյունաբերական) և մաքրման ձևից, որին ջուրը ենթարկվել է մինչև շրջակա միջավայր վերադարձվելը: Շրջակա միջավայր չվերադարձվող ջրի մասնաբաժինը դա սպառված ջուրն է:

Սույն ինֆոգրաֆիկը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատուն բացառապես Արմստատն է և այն կարող է չարտացոլել Եվրոպական Միության տեսակետը:

Funded by the European Union

EU4Environment
Water and Data in Eastern Partner Countries

ARMSTAT
Statistical Committee
Republic of Armenia